

**«ՄԵՆԱՄԵՆՔԸ» ՄԵՄ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ**

Բ. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի պատմական աշխարհագրության շատ հարցեր բազմաթիվ ուսումնասիրման կարիք են զգում: Մեր երկրի վաղ շրջանի պատմաաշխարհագրական ամենակարևոր փաստաթղթի՝ «Աշխարհացոյցի» ի հայտ գալու ժամանակի և հեղինակի հետ սերտորեն առնչվող հարցերից է նաև Հայաստանում աշխարհների ձևավորման ժամանակի խնդիրը: Բանի որ երկրի վարչաբաղաբաղական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն իրենց կնիքն են դնում հասարակության սոցիալական կառուցվածքի վրա, հիմք հանդիսանալով այս կամ այն սոցիալական խմբի ձևավորման կամ տարրալուծման համար, ապա պատմական աշխարհագրության շատ պրոբլեմների պարզաբանման համար պատմաաշխարհագրական անունների, տերմինների ուսումնասիրության հետ մեկտեղ ոչ պակաս նշանակություն ունի, առաջին հայացքից դրանց հետ ոչ մի առնչություն չունեցող, սոցիալական շերտավորման հարցի կամ սոցիալական խմբերի, նրանց գործառության ուսումնասիրությունը:

Նման մոտեցումը մեր ուշադրությունն է հրավիրում սոցիալական այնպիսի հասկացության վրա, ինչպիսին է «մեծամեծք նախարարքը» կամ ուղղակի «մեծամեծքը», որը մինչև օրս չի դարձել հատուկ քննության առարկա:

Հայաստանի վաղ միջնադարի պատմության աղբյուրներում «մեծամեծք» հասկացությունն իր ամենալայն ըմբռնմամբ արտահայտվում է այն դեպքում, երբ նա հանդես է գալիս «փոքունքի» հետ («ի մեծաց և ի փոքունք»¹, «մեծամեծք և փոքունք»)², ընդգրկելով հասարակության տարբեր շերտերի բովանդակություն: Նման միտք է արտահայտում նաև Փարպեցու «մեծամեծք» և «տղայք» հիշատակությունը³: Բայց մեծամեծքը, «փոքունքի» հետ օգտագործվելով, արտահայտում է նաև տվյալ դասակարգի որևէ խմբի բովանդակություն, ինչպիսի օրինակ՝ «... յամենայն ազատաց մեծամեծաց և փոքունք», երբ «մեծամեծքը» և «փոքունքը» տեղադրվում են ազատների դասի ներսում, արտահայտելով այդ ամբողջ սոցիալական խումբը:

Եղիշեի մոտ փոքր-ինչ այլ և ավելի կոնկրետ բովանդակություն է արտահայտում «մեծամեծքը» «փոքունքի» հետ, ընդգրկելով նախարարների ամբողջ դասը. «Յոսնեփ եպիսկոպոս, հանդերձ ամենայն միաբանելովքս ի մեծամեծաց մինչև ցփոքունս...» (Եղ., 2):

Վերոբերյալ վկայություններից նկատելի է, որ «մեծամեծքի» արտահայտած ամենակոնկրետ բովանդակությունը ֆեոդալների դասակարգի մի խավի ընդգրկումն է:

Հայ իրականության համար «մեծամեծք» հասկացության օգտագործումը հաճախակի է՝ կապված տարբեր իրադրությունների հետ, քայքայ ուշագրավն այն է, որ նույն հասկացությունը օգտագործվում է նաև հույն, իսկ ավելի հաճախ՝ պարսից իրականության համար:

«Մեծամեծքը» հույն իրականության համար օգտագործում են Ագաթանգեղոսը, Փավստոսը, Փարպեցին և Սեբեոսը: Ըստ Ագաթանգեղոսի վկայության մեծամեծքը ֆեոդալական աստիճանակարգության ավելի բարձր աստիճանին պետք է գտնվեին, քան «սպարապետքն, զօրագլուխքն և իշխանքն», որոնց հիշատակումը հաջորդում է մեծամեծքին⁴:

¹ Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 42:

² Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Ե., 1989, գլ. 7: (Այսուհետև շարադրանքում՝ Եղ.):

³ Ազգար Փարպեցի, Պատմություն հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնյան, Ե., 1982, Ա.—ԺԱ: (Այսուհետև շարադրանքում՝ Փարպ.):

⁴ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Ե., 1988, 48: (Այսուհետև շարադրանքում՝ Ագաթ.):

Փավստոսի⁵ և Սեբեոսի⁶ հիշատակությունները վկայում են, որ մեծամեծքը եղել են արքունի խոշոր պաշտոնյաներ՝ թագավորին կից խորհրդարանի անդամներ, բայց ոչ միայն խորհրդականներ, այլ նրանցից էլ բարձր կանգնած, առաջադաս սոցիալական խումբ: Հույն իրականության մեջ մեծամեծքի դերի և հեղինակության մասին է վկայում նաև Փարպեցին (Փարպ., Գ—ԿԴ):

Վաղ միջնադարի հայ հեղինակները, արտացոլելով նաև պարսից իրականությունը, վկայում են այնտեղ ևս գոյություն ունեցող մեծամեծքի որոշակի խափ մասին, որը գործում էր պարսից թագավորին անմիջականորեն կից, և թագավորից ու նրա աթոռակիցներից հետո պետական բարձրաստիճան անձիք էին (Եղ., 1, 2):

Փարպեցու՝ մեծամեծքի վկայությունների համադրումը մյուս հեղինակների նույնանուն տեղեկությունների հետ ցույց է տալիս, որ վերջինս, պարսից իրականությունն արտացոլելիս, հակված է մեծամեծքը նշել որպես արքունի մեծամեծք, ինչպես օրինակ. «ամենայն մեծամեծաց դրանն» (Բ—ԴԷ), «մեծամեծացն ի դուռն» (Գ—Կ): Սա հեղինակը թերևս նշում է այն նպատակով, որպեսզի այս մեծամեծքը տարբերի Հայոց մեծամեծքից, որոնք յիշենց դրությամբ արդեն տարբերվում էին նախորդներից:

Աղբյուրների քննությունը վկայում է, որ պարսից արքային կից գոյություն է ունեցել ավագանի (որը թերևս պետք է հասկանալ ժամանակակից «խորհուրդ» իմաստով), որի անդամները կոչվել են «ավագներ»: «Ավագանու» և «մեծամեծքի» մասին տեղեկությունների զուգորդումը ցույց է տալիս, որ մեծամեծքը կազմել են ավագանու մի մասը, այսինքն մեծամեծքը հանդիսացել են ավագանու անդամներ: Բայց արդյո՞ք կարելի է նույնացնել այս երկու հասկացությունները, կարծելով, որ մեծամեծքը ներկայացրել են ողջ ավագանին: Թեև Փարպեցու որոշ տեղեկություններից (Ա—ԺԴ) կարելի է նման կարծիք կազմել, բայց պետք է նկատել, որ մեծամեծքը կազմել են ավելի նեղ շրջան, քան ավագանին, և մեծամեծքն ու ավագները, միմյանց չիսնագարելով հանդերձ, դեռ փոխադարձաբար օգնել են իրար պետական հարցերի լուծման ժամանակ: Նշենք նաև, որ «մեծամեծք ավագանին», ավելի ճկուն օրգան լինելով, ավելի մեծ հեղինակություն և դեր է ունեցել պետական կառավարման գործում, քան ավագանին ամբողջությամբ:

Արքունի ավագանու ներսում մեծամեծքի ավագանու գոյության մասին վկայում է նաև Գալստուր՝ և՛ պարսից, և՛ հունական իրականության համար (Բուզ., 4—Դ, 4—Զ):

Այսպիսով մենք տեսնում ենք, որ պարսից մեծամեծքը ֆեոդալական վերնախափի ներկայացուցիչներ են, եղել են պետական բարձր պաշտոնյաներ և, արքունի ավագանու կազմում գտնվելով, գրավել են ավելի հեղինակավոր դիրք՝ դառնալով պարսից թագավորի օգնական օրգանը, որն ինքն էր քննարկում և վերջնական լուծման համար թագավորին ներկայացնում հարցերը:

«Մեծամեծք» տերմինի օգտագործումը հայ հեղինակների կողմից՝ օտար և ազգային իրականությունների համար, վկայում է ոչ այնքան օտար իրականություններին հայ հեղինակների լավատեղյակությունը, որքան հայ իրականությանը բնորոշ հասկացությունների արտահանումը և դրանց վերագրումը հարևան երկրների հասարակական կյանքին: Այս է վկայում նաև «մեծ» արմատի բուն հայկական լինելը, որից էլ ձևավորվել է «մեծամեծք» բառը:

Հարցին նման մոտեցումը մեզ հնարավորություն է տալիս հայկական աղբյուրների այդպիսի տեղեկություններն օգտագործել բուն հայ իրականության ուսումնասիրման գործում ծագող պրոբլեմների քննության համար: Հայ իրականությանը ևս ծանոթ էր «մեծամեծք» հասկացությունը: Սակայն նրա էության, նրանց գրված սոցիալական տեղի, իրավունքների և արտոնությունների, պատմական զարգացման ուսումնասիրությունը ավելի մեծ բարդությունների հետ է կապված, որը պայմանավորված է հայ իրականության մեջ նրա քաղաքական կյանքում տեղի ունեցող մի շարք առանձնահատկություններով:

«Մեծամեծքին» մենք հանդիպում ենք հայ վաղ միջնադարի գրեթե բոլոր աղբյուրներում, ուր նրանք հանդես են գալիս աշխարհաժողովում (Բուզ., 8—ԴԱ) ու գորածողվում (Ագաթ., 791), արքունի հրամաններում (Ագաթ., 131), արքայական ընթրիքում (Բուզ., 5—ԼԵ) և այլ տարբեր պայմաններում: Հասարակական կյանքի տարբեր ոլորտներում «մեծամեծքի» հանդես գալը վկայում է այդ հասարակությունում նրանց գրաված բարձր դիրքի մասին, ուստի նրան հասարակության մյուս սոցիալական խմբերից տարանջատելուց առաջ փորձենք տալ նրա տեղը ժամանակի սոցիալական աստիճանակարգությունում:

⁵ Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1912, 4—2: (Այսուհետև շարադրանքում՝ Բուզ.):

⁶ Պատմութիւն Սեբեոսի, Եր., 1979, ԼԴ, ԼԸ: (Այսուհետև շարադրանքում՝ Սեբ.):

Ազաթանգեղոսի մոտ «մեծամեծք» հիշատակող սոցիալական 7 ցուցակներից 4-ում «մեծամեծք» կանգնած են ֆեոդալական աստիճանակարգության վերևում, ինչպես օրինակ.

«Եւ կուտեցան առ հասարակ զօրքն ամենայն, և մեծամեծք և կուսակալք և գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք և հասեալ կային առաջի թագաւորին» (Ազաթ., 701):

Դժվար չէ նկատել, որ ֆեոդալական աստիճանակարգման մեջ մեծամեծքը զիջում են միայն թագավորին և արքայազուններին: Միաժամանակ ակնհայտ է, որ նշյալ ցուցակները կազմված են սոցիալական խմբերի՝ հասարակության մեջ իրենց գրաված դիրքի նվազման կարգով: Նույն Ազաթանգեղոսի մոտ հանդիպում ենք նաև հակառակ սկզբունքին, երբ սոցիալական խմբերի հիշատակությունը կատարվում է հասարակության մեջ նրանց գրաված դիրքի անման կարգով: Ինչպես օրինակ. «Արդ իբրև այս այսպէս եղև՝ ժողով ամբողջն ի պէտայ կուտէր բազմութիւն մարդկանց, և բազում սպասաւորք արքունի, որ եկեալ էին զմեռանէն՝ տանել յարքունիս, և նախարարքն, և մեծամեծք ւազանույն, որ եկեալ էին շքադիրք՝ պատիւ առնել նման և երթալ ընդ մնա (Հոհիփսմեի— Ռ. Հ.)...» (Ազաթ., 173):

Բայց միշտ չէ, որ նման ցուցակներում հերթականությունը տրվում է որևէ սկզբունքից ելնելով: Ստորև բերվող օրինակում չի պահպանվում ոչ առաջին, ոչ էլ երկրորդ սկզբունքը (այս տեսակետին է հանգեցնում ոչ միայն Ազաթանգեղոսի մոտ հանդիպող ցուցակների ընդհանուր համեմատությունը). «Եւ ի վաղիւ անդր թագաւորն և նախարարքն և մեծամեծ ւազանին խառնաւանակ ամբոխին բազմութեամբ եկեալ ի ծուր իջեալ առաջի սրբոյն Գրիգորի...» (Ազաթ., 225):

Մեծամեծքի՝ ֆեոդալական աստիճանակարգման (թագավորից հետո) առաջին տեղում գտնվելը ակնհայտ է նաև Բուզանդի մոտ հիշատակված ցուցակներում, ինչպես. «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, ւազք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց ոամիկ մարդկանն» (Բուզ., 3—ԻԱ), կամ՝ «Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծ նախարարք և կուսակալք գաւառատեարք գործակալք և դասապետք շինականաց...» (Բուզ., 4—ԾԱ):

Մեծամեծքի՝ ֆեոդալական դասակարգում առաջին դեմք (թագավորից հետո) լինելը քացատրվում է ոչ միայն նման ցուցակների արտաքին տեսքով: Այս են վկայում նաև շատ այլ փաստեր:

Համաձայն տեղեկությունների՝ մեծամեծքը խոշոր քաղաքական դեմքեր էին, որոնց վրա էլ հենվում էին Արշակունի թագավորներն իրենց քաղաքականության իրացման գործում: Նրանք կազմում էին արքայի շրջապատը՝ արտահայտելով և կատարելով նրա կամքը պետության կառավարման գրեթե բոլոր բնագավառներում:

Կապված հայոց թագավորի՝ քաղաքական, տնտեսական, ռազմական հզորությունից և անձնական դիրքից, մեծամեծքը տարբեր դիրքորոշում էին ունենում գահի և գահակալի նկատմամբ: Եթե միջազգային պայմանները թույլ էին տալիս հայոց արքային զերծ մնալ արտաքին պատերազմներից, ձեռնամուխ լինել երկրի ներքին կյանքի շենացմանը, ապա մեծամեծքի ենթակայությունը և կախվածությունը թագավորից մեծանում էր, և նրանք հաճախ էին գալիս որպես արքայի շքախմբի անդամներ, նրան ուղեկցում իր շրջապատյութների ժամանակ, կատարում նրա հրամանները, կամքն ու ցանկությունները՝ լինի դա ռազմական, թե կրոնագաղափարական, ինչպես Տրդատ Մեծի օրոք:

Կազմելով թագավորի շրջապատը, մեծամեծքը թագավորի լուկ կամակատարները չէին. նրանք նաև նրա խորհրդատուներն էին (Բուզ., 3—ԺԴ), թեև թագավորը կարող էր համաձայնել նրանց առաջարկին կամ էլ մերժել՝ կապված կոնկրետ հարցադրումից:

Թագավորի իշխանության կայունության պայմաններում մեծամեծքը թագավորի ռազմական հենարանն էին, պայքարում էին պետական դավաճանության առանձին երևույթների դեմ, մասնակցում օտար նվաճողների ռազմական արշավանքների դեմ հայոց արքայի մղած պաշտպանական կռիվներին, որն ակնհայտ է Խոսրով Կոտակի թագավորության տարիներին: Բայց մեծամեծքը շարքային զորականներ էին, նրանք կազմում էին ռազմական խորհուրդը, որն անգամ որոշում էր ճակատամարտին հայոց արքայի անձնական մասնակցության հարցը, մի երևույթ, որը նկատվում է Արշակի օրոք մղվող հայ-պարսկական կռիվներից մեկի ժամանակ (Բուզ., 4—ԽԵ):

Միայլ կլինի կարծել, թե Հայոց մեծամեծքը իրենցից ներկայացնում է միայն թագավորին նվիրված խոշոր ռազմաքաղաքական գործիչների մի ամբողջություն, որը վերջինիս սնխափան հենարանն էր, և որի ամրացման ու կայունացման համար թագավորը ոչ մի եռանդ չէր խնայում:

Պետք է նկատել, որ մեծամեծքը ոչ միայն կատարում էին թագավորի հրամանները,

այլև ուղղություն էին տալիս և վերահսկում նրա վարած ներքին և արտաքին քաղաքականությանը և իրենց անհամաձայնության կամ նրա վրա ճնշում գործադրելու անկարողության դեպքում բռնում պետական դավաճանության ուղին (Բուզ., 4—Ծ): Բայց թագավորի վարած քաղաքականության հետ անհամաձայնության հարցի լուծման միակ ուղին չէր սա. այն կարող էր նաև պետական հեղաշրջման փորձի վերածվել (Բուզ., 4—ԺԵ): Որոշ դեպքերում էլ կարող էին հետևալ արքունիքից, հետևելը տանելով իրենց ռազմական ուժը և թագավորին թողնելով միայնակ ու անպաշտպան, նրան հանձնել «բարեկամի» դեմքով օտար չարագործի ձեռքը, ինչպես կատարվեց և Տիրանի, և Պասիի հետ:

Սրանք երևույթներ են, որոնք վկայում են մեծամեծի ռազմական, հետևաբար նաև՝ տնտեսական ինքնուրույնության և ուժի մասին, մի բան, որն անտես չէր մնում հայ թագավորների կամ պետության գլուխ անցած այս կամ այն պետական գործչի կողմից: Այս են վկայում Արշակ Բ-ի՝ զահի բարձրանալուց անմիջապես հետո մեծամեծներին հնազանդեցնելու և Մանուելի՝ Վարազդատին վտարելուց հետո Հայոց մեծամեծքին իր մոտ ժողովելու, իսկ հետագայում նաև պահելու մասին Բուզանդի տեղեկությունները:

Բայց արդյո՞ք միայն նրանք էին հասկացել մեծամեծի ուժը, կամ այդ ուժը միայն ա՛յդ ժամանակ էր դրսևորվել: Այս հարցի ամենացայտուն պատասխանն է Բուզանդի հիշատակությունը Խոսրով Կոտակի օրենքի մասին. «... զի մեծամեծ առագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեսարքն որ էին թիրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի ոք երթոցէ ի նոցանէ ընդ գօրս արքունի: Ջի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատարենայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ» (Բուզ., 3—Ը):

Պետք է ասել, որ իրենց նախորդի այս քաղաքականությունը հնարավորության սահմաններում ձգտել են պահպանել նաև Տիրանը, Արշակը, Պասյը (Բուզ., 3—ԺԲ, 4—Ի, 5—ԼԲ):

Մեծամեծի քաղաքական ուժը իր դրսևորման բարձրակետին էր հասնում երկրից թագավորի բացակայության, իսկ ավելի կոնկրետ՝ զահի թափուր լինելու ժամանակ, երբ մեծամեծի գլխավորությամբ հրավիրվում էր երկրի քաղաքական և ռազմական խոշոր ներկայացուցիչների համաժողով և լուծվում զահի ժառանգորդի, պետության արտաքին կողմնորոշման և ներքին քաղաքական դրության հարցերը, ինչպես եղավ Տիրանի՝ կուրացված գերվելուց և Պասիի՝ անգաբար սպանվելուց հետո:

Հայոց մեծամեծի՝ երկրի քաղաքական կյանքում ունեցած խոշոր դերի մասին են վկայում նաև նրանց միջազգային մանաչում ունենալը: Օտար արքունիքներում նրանց դերի գնահատման մասին են վկայում ինչպես Փավստոսի (Բուզ., 5—ԼԸ), այնպես էլ Խորենացու տեղեկությունները: Այս երևույթն ավելի ակնհայտ է դառնում Արշակունիների անկումից հետո, ինչպես տեղեկացնում են Խորենացին (3—ԾԶ), Եղիշեն (3), Փարպեցին (Բ—ԻԵ):

Մեծամեծի մասնակցությունը արտաքին քաղաքական հարցերին երևում է նաև նրանց դիվանագիտական գործունեությունից, և թեև տեղեկություններից մեկում դիվանագիտական պատվիրակությունը ղեկավարում է կաթողիկոսը, բայց դա ձևական կողմն էր:

Թեև մեծամեծքն աշխարհիկ ֆեոդալներ էին, իսկ կրոնական կյանքն ուներ իր աստիճանակարգությունը, բայց նրանք մասնակցում էին կրոնական կյանքին, հանդես գալով այն վերահսկողի դերում: Ասվածի առաջին վկայությունը հոգևոր առաջնորդի՝ կաթողիկոսի ընտրությանը նրանց ակտիվ մասնակցությունն էր թագավորի գլխավորությամբ (Բուզ., 3—ԺԴ, 4—Գ), իսկ Արշակունիների վերացումից հետո նրա թեկնածությունն առաջարկում ու ներկայացնում էին պարսից արքունիքում (Փարպ., Լ—ԺԵ):

Կարծեք անհրաժեշտություն էր մեծամեծի մասնակցությունը նաև կաթողիկոսի ձեռնադրմանը, որը Կեսարիա էր մեկնում անպայման նրանց ուղեկցությամբ (Ագաթ., 795—96, 878, Բուզ., 3—ԺԲ, ԺԶ, 4—Դ):

Մեծամեծքը հանդիսանում էին նաև կարևոր քաղաքական ու կրոնական հարցեր լուծող եկեղեցական ժողովների հրավիրման կամ անցկացման նախաձեռնողները՝ հատկապես հետաքրշակույնաց շրջանում (Եղ., 2, Փարպ., Բ—ԻԳ): Նրանք անմասն չեն մնացել նաև հարևան երկրների քրիստոնյա համայնքների հետ հայ եկեղեցու ունեցած հարաբերություններին²:

Թեև ընդունված կարծիք է, որ դատական գործը եկեղեցու մենաշնորհն էր, բայց այս-

¹ Մովսեսի Խորենացույ Պատմութիւն Հայոց, Տիփլիս, 1918, 3—ԼԴ: (Այսուհետև շարադրանքում՝ Խոր.):

² Գիրք Թղթոց, էջ 42, 48:

տեղ ևս անմասն չեն մնացել մեծամեծքը, որոնք ավագ եպիսկոպոսի և ավագ դատավորների հետ գերագույն ատյան են կազմել աղանդավորության դեմ⁹: Եթե քրիստոնեության շրջանում նրանք հանդես էին գալիս կուրքերն ավերելու և քրիստոնեությունը տարածելու օգտին (Ագաթ., 790, 814), ապա նույն մեծամեծքը, արտահայտելով պետության շահերը, նախաքրիստոնեական շրջանում հանդես էին գալիս այդ կուրքերի պահպանման և նրանց երկրպագման ամեն մի թերացման դեմ (Ագաթ., 131):

Նվագ չէր մեծամեծքի դերը նաև մշակույթի զարգացման գործում: Սրա միայն մեկ արտահայտությունը նրանց նախաձեռնողի շահագրգռվածությունն էր հայ գրերի և հայերեն եկեղեցական գրականության ստեղծման կապակցությամբ (Փարսյ., Ա—ԺԱ):

Նման նշանակալից, բազմաճյուղ և տարաբնույթ գործառնություններով օժտված մեծամեծքի ինստիտուտը, որի մասին մենք վկայություններ ունենք 5—7-րդ դարերի աղբյուրներից, որոնք տեղեկություններ են տալիս ավելի վաղ ժամանակներից, անշուշտ ունեցել է իր պատմությունը, որն արտահայտվել է նրա այս կամ այն դերի թուլացմամբ կամ զարգացմամբ, նրա բովանդակության, սոցիալական կազմի փոփոխմամբ և այլ երևույթներով: Ուստի «մեծամեծքը» պետք է դիտել պատմական զարգացման մեջ:

Աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին պատմական ժամանակաշրջանը, որի հետ կապվում է «մեծամեծք» տերմինի օգտագործումը, Արշակունիների՝ Հայաստան թափանցելու և որպես տեղական թագավորական հարստություն հաստատվելու ժամանակահատվածն է: Թեև այս մասին վկայություն կա 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի «Պատմության» Անանունին վերագրվող հատվածում (և կարելի է կարծել, որ հեղինակը այդ դեպքերը կարող էր նկարագրել իր ժամանակի ըմբռնմամբ), որը կարող էր զուրկ լինել արժանահավատությունից, բայց նկատենք, որ Սեբեոսն իր ողջ «Պատմության» մեջ «մեծամեծք» տերմինը երբեք չի օգտագործում հայ իրականության համար՝ իր ժամանակի պատմական իրադարձությունները նկարագրելիս, այլ օգտագործում է միայն հույն և պարսից իրականությունների համար, որ պահպանվում էր թագավորական իշխանությունն իրեն համապատասխան պետական կարգով:

Մեծամեծքը Հայաստան գալով՝ եղել են նոր հարստության ներկայացուցիչների՝ Արշակունի թագավորների անմիջական հենարանը, որի ուժը պետք է լիներ իրենց հետ քերված գորքը: Այս պահին մեծամեծքի ազգային կազմը պետք է բացատրել հօգուտ ներթափանցողների, իսկ իր սոցիալական կազմով այն պարթև գորավորների, արքունի պաշտոնյաների մի ամբողջություն էր: Գալով Հայաստան, մեծամեծքի այս խավը պետք է ձգտեր արմատակալել երկրում՝ ձեռք բերելով որոշակի հողատարածքներ: Իր ռազմական հենարանի սոցիալ-տնտեսական ամրապնդմամբ պետք է շահագրգռված լիներ նաև թագավորը: Արշակունի թագավորի վարած նման քաղաքականության մասին է վկայում Խորենացին, երբ նկարագրում է Վաղարշակի բարենորոգչական գործունեությունը (Խոր., 2.—Է):

Ծահագրգռված լինելով նորաթուխ մեծամեծքի տնտեսական հիմնավորմամբ, թագավորը պետք է հանդես գար նաև տեղական վերնախավի շահերի արտահայտությամբ, թույլ չտալով որևէ ոտնձգություն նրանց իրավունքների նկատմամբ: Ուստի պետք է նկատել, որ նոր հողաբաժանումները կատարվելու էին հիմնականում ի հաշիվ պետական հողատիրույթների կամ կենտրոնախույս ֆեոդալների հայրենիքների:

Սկզբնական շրջանում թագավորի շրջապատը՝ արքունի ավագանին, կարող էր բաղկացած լինել միայն նորընծա մեծամեծքից: Բայց այս երկարատև ընթացք չէր կարող ունենալ, քանի որ եթե պաշտոնավար մեծամեծքը ձգտում էին տնտեսապես հիմնավորվել, ապա տնտեսական խորը արմատներ ունեցող տեղական ֆեոդալներն էլ պետք է ձգտեին մոտ գտնվել թագավորին՝ ունենալով պետության կառավարմանը մասնակցելու որոշակի իրավունքներ: Միանգամայն օրինակալի այս դիտումը պետք է հաշիվ առնել թագավորն իր հենարանն ամրացնելու համար: Եվ ահա թագավորի շրջապատում հայտնվում է ֆեոդալական վերնախավի ներկայացուցիչների մի խումբ, որի անդամները կոչվում են «մեծամեծք», «պատուաւորք», «պատուականք» (Ագաթ., 791), որոնք իրենց լիազորություններով այս կամ այն չափով տարբերվում են միմյանցից:

Ֆեոդալական հարաբերությունների ձևավորման ավարտը հանգեցնում է հասարակության խավերի որոշակիացման, որն էլ իր արտահայտությունն է գտնում պետական կառավարման համակարգում: Այժմ արդեն խոշոր տոհմական ֆեոդալներն են ձգտում մասնակցել պետության կառավարմանը, մի քան, որը պետք է թույլ տար թագավորը՝ նրանց ռազմատնտեսական հզորությունը օգտագործելու և կենտրոնախույս ձգտումները կասեցնելու համար: Այս պահին մենք արքունի ավագանին տեսնում ենք որպես «մեծամեծք նախա-

⁹ Կանոնագիրք Հայոց, Եր., 1964, էջ 464—465:

իրացն և աւագ տանուտէրք աւագանի» (Բուզ., §—Դ), երբ ավագանին ներկայացնում էին և մեծամեծքը, որոնք արդէն տեղական նախարարական դասին էին պատկանում, և ավագ տանուտերերը, որոնցից յուրաքանչյուրը ֆեոդալական որևէ խոշոր տոհմ էր ներկայացնում:

Ֆեոդալական հարաբերությունների զարգացումը տանում էր դեպի ֆեոդալական հողատիրության հզորացում և, հետևաբար, նրանց ռազմատնտեսական ինքնուրույնացում, որի հետ չէր հաշտվում թագավորը: Այս բանը պարզորոշ նկատվում է Արշակ Բ-ի օրոք տեղի ունեցած երկպառակտչական կոիվներից: Բայց պատմությունը վկայում է, որ արտաքին ներխուժումները կասեցնելու և սեփական դիրքերն ամրապնդելու համար Արշակը երբեմն զիջող քաղաքականություն է վարել, հաշվի նստելով ֆեոդալական խոշոր հողատերերի հետ: Ահա այս է, որ իր ազդեցությունն է գտել մեծամեծքի ինստիտուտի սոցիալական կազմի վրա, որն արդէն հանդես է գալիս «մեծամեծք, նահապետք» ձևով (Բուզ., 4—Բ., 4—Գ.), ըստ որի մեծամեծքը ներկայացնում էին նահապետքը՝ կամ հիմնականում, կամ բացառապէս: Այս ժամանակ մեծամեծքը շարունակում էր մնալ արքունի ավագանու վճռորոշ կորիզը, որն ավագանու լիազորությունները կիսում էր մյուս անդամների հետ, որոնք կոչվում էին «աւագք» կամ «աւագք պատուականք», որոնց կարելի է նույնացնել «խորհրդակիցների» հետ, որոնք սակայն չունեին մեծամեծքի դերը:

Արշակունիների անլուծից հետո մեծամեծքը դադարեց հանդես գալ որպէս հայոց թագավորին կից ավագանու վճռորոշ մաս: Բայց սա չի ճշանակում, թե այն անմիջապէս վերացավ: Թեև մինչև Ավարայր ընկած դեպքերի կապակցությամբ հիշատակվում են «մեծամեծք», «մեծամեծք աւագանոյն» արտահայտությունները, սակայն պարզ է, որ այդ ինստիտուտը ևս ճգնաժամ էր ապրում: Որոշ ժամանակ անց «մեծամեծքը» Արշակունյաց ժամանակաշրջանի ընթրնամամբ արդէն դադարում է գոյություն ունենալ: Բավական է ասել, որ Փարպեցու մոտ վճռորոշ դեր են խաղում «աւագ տանուտերք», «աւագ նախարարք», նախարարք, տանուտերք և ավագ սեպուհք: Այժմ արդէն «աւագանի» հասկացությունը ընդգրկում է այս կամ այն քաղաքական կողմնորոշում ունեցող նախարարների որոշակի խումբ: Իսկ Սեբեոսի «Պատմությունում» արդէն հայ իրականության համար ոչ մի դեպքում չի օգտագործվում «մեծամեծք» հասկացությունը: Այն Սեբեոսը հիշատակում է միայն հույն և պարսից արքունիքները նկարագրելիս:

Հետևաբար, ինչպէս հույն և պարսից իրականություններում, այնպէս էլ հայ իրականության մեջ, մեծամեծքը որպէս սոցիալական միավոր բնորոշ է թագավորական (Արշակունյան) շրջանին:

Այժմ փորձենք պարզել մեծամեծքի հատկանիշները՝ հասարակության մեջ նրանց կոնկրետ տեղը որոշելու համար:

Ագաթանգեղոսը մեծամեծք է համարում (Ագաթ., 814) այն նախարարների խմբին, որոնք մինչ այդ բնորոշում է որպէս «զիխարք նախարարացն և կուսակալք աշխարհացն», որոնք «իշխանք են ընտիրք կուսակալք կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք» (Ագաթ., 795—796): Այս վկայության համադրումը նույն հեղինակի այլ տեղեկության հետ («Եւ կուտեցավ առ հասարակ զօրքն ամենայն, և մեծամեծք և կուսակալք և գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք, և հասեալ կային առաջի թագաւորին» (Ագաթ., 791), ցույց է տալիս, որ կուսակալքը մեծամեծք չէ, որ մեծամեծք են համարվում «զիխարք նախարարացն», որք են «իշխան ընտիրք» և «բիրաւորք» ու «հազարաւորք»: Այստեղ «բիրաւորք և հազարաւորքը» ոչ թե որևէ պաշտոն է, այլ նախարարների ունեցած զորքի քանակը, որ կարող են ունենալ և՛ ընտիրքը, և՛ կուսակալքն ու կողմնակալքը:

Մեծամեծքի և կուսակալքի տարբեր լինելու մասին է վկայում նաև Փավստոսը (Բուզ., 3—ԻԱ, 4—ՄԱ):

Այժմ քննարկենք հետևյալ տեղեկությունը, թե Խոսրով Կոտակը «դնէր օրենս, զի մեծամեծ աւագանին նախարարքն աշխարհակալքն աշխարհատէրքն»՝ որ էին բիրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեցին, և մի ոք երթիցի ի նոցանէ ընդ զօրս արքունի: Ջի երկնչէր նա յերկմտութենէ նոցա. զի գուցէ զնոյն գործ Դատաբեանայն գործիցեն և ապստամբ լինիցին ի նմանէ» (Բուզ., 2-Ը): Առաջին հայացքից թվում է, թե թագավորն օրենք է ընդունում մեծամեծ ավագանու և բյուրավորք ու հազարավորք աշխարհակալ աշխարհատեր նախարարների մասին: Բայց հարց է ծագում, եթե «բիրաւորքն և հազարաւորքն» արտահայտությունը բնորոշում է միայն աշխարհակալ աշխարհատեր նախարարներին, ապա ինչպէ՞ս կարող է մեծամեծ ավագանին սպառնալիք դառնալ թագավորի համար Դատաբեանի օրինակով: Ուստի պետք է եզրակացնել, որ «բիրաւորքն և հազարաւորքն» արտահայտությունը վերաբերում է նաև մեծամեծ ավագանուն

կամ ուղղակի մեծամեծքին: Այս հետևությունը չի հակասում Ագաթանգեղոսի նախորդ տեղեկությանը:

Փավստոսի «Պատմությունից» բերված հատվածի քննությունը հանգեցնում է նաև մի այլ հետևության. ոչ «նախարարքն աշխարհակալքն աշխարհատեսարքն» արտահայտությունը «մեծամեծ առագանին» արտահայտության պարզաբանումն է և ոչ թե մեծամեծ ավագանուց բացի թագավորի մոտ մնացող այլ սոցիալական խմբի ներկայացուցիչների անվանում: Թեև մի այլ տեղեկություն («Ապա առաել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն, մարդիկ աշխարհին Հայաստան երկրին, նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատարոքք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ուսմիկ մարդկանն» (Բուզ., 3—ԻԱ) վկայում է մեծամեծքի և աշխարհակալքի՝ տարբեր սոցիալական խմբեր լինելու մասին, բայց սա դեռ չի նշանակում, թե վերոհիշյալ տեսակետն ընդունելի չէ: Նկատենք, որ «աշխարհակալ» և «աշխարհակալ աշխարհատեսար» տարբեր ձև ունեցող արտահայտությունները կուցեցան նաև տարբեր բովանդակություն: Այս միտքը հաստատում է նաև նույն հեղինակի մոտ հանդիպող «Աշխարհատեսարք»-ի մի այլ հիշատակություն՝ «գաւառակալք աշխարհատեսարք» արտահայտությամբ (Բուզ., 3—Գ):

Մեծամեծքը բնորոշող ամենադիպուկ վկայությունը հետևյալն է. «Զի ամենքեանն դուք առդիկ կալք և վկալքք, մանաւանդ զի ամենքեանն դուք կացեալ էք յազգեղ արշակունւոյ. ոմանք ի ձեռք գաւառատեսարք լեալք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք առագաւագ առանց գեղից և գունձուց տեսարք լեալ էք, և պէսպէս դատարարութեանն» (Բուզ., 4—ՄԱ): Այստեղ մենք հանդիպում ենք մեծամեծքի էությունը բացահայտող մի նոր արտահայտության՝ «մեծամեծք աշխարհաց»:

Սա պետք է որ լիներ պաշտոն, գործակալություն, ինչպես ընդունում է Խ. Սամվելյանը¹⁰: Բայց մեծամեծքը մյուս գործակալներից տարբերվում էին իրենց բազմաբնույթ ֆունկցիաներով. մինչդեռ յուրաքանչյուր գործակալ ուներ իր կոնկրետ ֆունկցիան: Մեծամեծքը և գործակալը նույն սոցիալական խավը չէին (Ագաթ., 126, 131):

Մեծամեծքը եթե սկզբնավորվեցին որպես այնպիսի հողատերեր, որոնք իրենց կալվածքներն ստացել էին ի պաշտոնէ, ապա հետագայում ներկայացնում էին այն հողատերերի դասը, որոնք պաշտոն էին վարում, ելնելով իրենց ռազմատեսական հզորությունից: Մեզ հասած աղբյուրները վկայում են մեծամեծքի հենց այս ժամանակաշրջանի մասին:

Այսպիսով, մեծամեծքը եղել են աշխարհների ներկայացուցիչներ, աշխարհակալներ, աշխարհատերեր, որոնք կոչվել են «իշխանք ընտիրք» և ունեցել են հազարյակ և ավելի զինվոր: Բայց հասարակության այս ընտրանու պաշտոնը որոշելու համար դիտենք, թե ինչ է իրենցից ներկայացնում «աշխարհ» ըմբռնումը ըստ 5-րդ դարի աղբյուրների:

Հետաքրքրություն ներկայացնող «աշխարհ» անվան հիշատակությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն 5-րդ դարի աղբյուրներում արտահայտում է տարբեր իմաստներ: Դրանցից առաջինը երկրի, պետության իմաստի ընդգրկումն է, ինչպես օրինակ՝ Հռովմայեցու, Հայոց, Վրաց, Լիվնաց, Աղո:անից, Յուճաց աշխարհների հիշատակումը:

Բայց աղբյուրները վկայում են «աշխարհի» այլ բովանդակության մասին, որն է՝ երկրից փոքր վարչական միավորը՝ նահանգը: Այս մասին վկայում է «Աշխարհացոյց»-ը¹¹: Բայց քանի որ «Աշխարհացոյց»-ի ժամանակի հարցը պատմագրության մեջ տարակարծություններ է առաջացրել, ուստի 5-րդ դարի պատմիչների հաղորդած տեղեկությունների քննությանը դիմենք:

Նշենք, որ մեր առջև խնդիր չենք դրել պարզաբանելու 5-րդ դարում «Աշխարհացոյց»-յան աշխարհների գոյության հարցը, որը յուրաքանչյուր աշխարհի ձևավորման ընթացքի քննություն է պահանջում, այլ կփորձենք պարզել, թե ինչ սահմաններ է գրավում «աշխարհ» հասկացությունը՝ ըստ 5-րդ դարի աղբյուրների:

Պատմիչների աշխատություններում որպես աշխարհներ հիշատակվում են Կորդուքը, Մոփքը, Գուգարքը, Ռշտունիքը, Մոկքը, Սյունիքը, Մավդեից աշխարհը, Ուտիացոյց աշխարհը, Նոշիրականը, Կագքը, Կորդիքը, Տայքը, Ջորոց աշխարհը, որոնք բոլորն էլ Մեծ Հայքի՝ պատմական տարբեր ժամանակաշրջանների վարչաքաղաքական միավորներ են եղել: Եթե աշխարհների այս անվանումները համընկնեն «Աշխարհացոյց»-ի աշխարհների հետ, ապա թերևս «Աշխարհացոյց»-ի աշխարհների ձևավորման հետ կապված պորթլեմների թիվը պակասեր, բայց այդպես չէ: Այստեղ հիշատակվող տեղանունները թեև «աշխարհ» են անվանվում, բայց համապատասխանում են «Աշխարհացոյց»-ի կամ աշխարհանուններին,

¹⁰ Խ. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, էջ 219, Եր., 1989:

¹¹ Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ, Վեներիկ, 1881, էջ 29:

կամ գավառաճոճներին, որից էլ կարելի է ենթադրել, որ «աշխարհ» հասկացությունը կայուն բովանդակություն չունի:

Ստորև բերվող տեղեկությունները վկայում են, որ հեղինակները տարբերություն են տեսել «աշխարհ» և «գավառ» հասկացությունների միջև, այլապես դրանք չէին հիշատակվի կողք կողքի:

1. «Իսկ միս ևս այլ հրովարտակ հրամայեաց (Տրդատը) գրել ընդ աշխարհս և ընդ գաւառս իշխանութեանն իւրոյ՝ օրինակաս այսովիկ: «Տրդատիոս Հայոց մեծաց արքայ, առ աշխարհս և առ գաւառս «առ ամենեսին ողջոյն» (Ագաթ., 133—134):

2. «Յետ այսորիկ հասեալ նմա բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց մեծաց» շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս և յազարակս» (Ագաթ., 837):

3. «Եւ ի տեղեաց սահմանացն Հայոց՝ տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկուոյ ածել յարուեստ դըպրութեան...» (Ագաթ., 840):

4. «Սոյնպէս և ի տեղիս մեհենացն գոր կործանեաց յառաջագոյն, սոյնպէս և յԱրտաշատ քաղաքի և ամենայն տեղիս, յաշխարհս և ի գաւառս առ հասարակ...» (Ագաթ., 841):

5. «Նախ ինքն (Ներսէսը) առնէր, և ամենեցուն զնոյն ուսուցանէր, առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս. և ի գաւառս և ի կողմանս կողմանս, ի կոյս, կոյս, ի խորշս սահմանացն Հայոց...» (Բուզ., 4—Դ):

6. «Բոյց զի վասն՝ քո մեծ վաստակք են առ իս, գոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի քեզ. բայց քեզ արծան էր զօգոտ քո անձիդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս» (Բուզ., 5—Է):

Բերված վկայությունների մասին վերը ասվածին պետք է ավելացնել, որ նրանցում աշխարհ-գավառ համեմատության դեպքում առաջադասվում է աշխարհը՝ որպես ավելի խոշոր և նշանակալից վարչական միավոր:

Տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ 5-րդ դարի աղբյուրները վկայում են նաև աշխարհացույցյան աշխարհ-գավառ հարաբերակցության գոյության մասին, ինչպես. «Եւ գունդս գունդս արձակէր (Վարդանը) յաշխարհն Սիւնեաց, առնոյր և աւերէր զբազում գաւառս...» (Եղ., 3) հիշատակությունը, ըստ որի ավերվող բազում գավառները գտնվում են Սյունյաց աշխարհում: Աշխարհի՝ գավառներ պարունակելու մասին է վկայում նաև Փարպեցին իր «Թղթում», երբ խոսում է Սյունյաց աշխարհում իր ապրած երկամյա կյանքի մասին:

Ինչպես տեսնում ենք, 5-րդ դարի աղբյուրները հայ իրականության համար ընդունում են աշխարհի 2 բովանդակություն՝ որպես երկիր և որպես այդ երկրի նահանգ, որն էլ ունի իր ներքին՝ գավառային բաժանումը: Այսինքն՝ «աշխարհի» «աշխարհացույցյան» ըմբռնումն ակնհայտ է նաև 5-րդ դարի պատմական աղբյուրներում:

Բայց կա նաև մի հետաքրքիր դիտարկում. «աշխարհք» լայն և նեղ ըմբռնումների կիրառումը հայ պատմիչների կողմից նաև պարսից իրականության համար, ինչպիսին է «Ապար աշխարհի» հիշատակությունը Փարպեցու կողմից (Փարպ., Բ—ԾԷ), թեև տվյալ դեպքում նշվում է որպես «ձեռին իշխանությանն տանն Հայոց թագաւորին» (Բուզ., 4—Ծ): Մեր դիտարկումը հիմնավորում է նաև հետևյալ տեղեկությունը. «Նա և զսահմանս հաստատեալս յԱրտաշիտ, զբարինս յերկրի կացուցանելով, նորոգեց, և յիր անունն փոխելով Արտաշիրական անուանեց: Եվ կալաւ զաշխարհս մեր որպէս զմի յաշխարհացն իւրոց, պարսիկ գործակալօք ամս քսան և վեց...» (Սոր., Բ—ԷԵ), որը հիշատակելով, թե Հայոց աշխարհը դիտվում է որպես Պարսից աշխարհի աշխարհներից մեկը, վկայում է «աշխարհի» լայն և նեղ ըմբռնումների գոյությունը նաև պարսից իրականության համար:

Այստեղից հարց է ծագում. «աշխարհ» տերմինը պատմալեզվական հասկացություն լինելով, աշխարհագրական տեղաշարժ է արել, թե՛ հայ պատմիչները հարևան իրականությունը ներկայացրել են ազգային բնորոշ ըմբռնումներով: Պարզվում է, որ այս երկու ըմբռնումները պետք է դիտել փոխկապվածության մեջ, քանի որ «աշխարհ» հայերեն բառը նույնացվում է հին կարսկերեն xšatra «թագավորություն», զենդական xšatra «թագավորություն», «իշխանություն», պահլավերեն šatr, պարսկերեն šahr «քաղաք» (հնագույն նշանակությամբ՝ «երկիր») բառերի հետ, իսկ ծագումը բխեցվում է իրանական xšāy «իշխել» արմատից¹²:

Այստեղից էլ ծագում է Պարսկաստանում «աշխարհի», որպես նահանգ, գոյության և այնտեղից Հայաստան թափանցելու ժամանակի հարցը: Բայց սա առանձին ուսումնասիրության առարկա է:

¹² Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, Բ. Գ, 1977, էջ 218:

«Աշխարհի» նեղ ըմբռնման և գավառից նրա տարարնությունը մասին վկայում են նաև ժամանակի սոցիալական կարգն արտացոլող ցուցանակները, որտեղ հանդիպող «գաւառատեարք գաւառակալքի» (Բուզ., 4—ՄԱ) և «գաւառակալքի» (Ազաթ., 791) հիշատակությունները ցույց են տալիս ոչ միայն նրանց, որպես առանձին սոցիալական միավորի գոյությունը մեծամեծքի կողքին, այլև նրանց ստորադասումը վերջինիցս:

Վերադառնալով Բուզանդի տեղեկությանը, թե Արշակունիների կողմից «ոմանք ի ձենք գաւառատեարք լեալք» «և ոմանք մեծամեծք աշխարհաց» (Բուզ., 4—ՄԱ), ուզում ենք ասել մի հետևություն. մեծամեծքը եղել են տարածքարվանդակային իմաստով նեղ ըմբռնմամբ աշխարհի, այն է՝ «Աշխարհացոյց»-ի աշխարհների (նահանգների) իրավական ներկայացուցիչները թագավորի դիվանում: Հողատարածքներ ունենալով տվյալ աշխարհում, մեծամեծը հանդիսանում էր տվյալ ամբողջ աշխարհի ոչ թե փաստական, քանի որ այդ աշխարհում կարող էին գտնվել նաև այլ նախարարական իշխանություններ, այլ իրավական տերը: Նա իր ռազմատնտեսական իրավունքները իր սեփական հայրենիքից դուրս, բայց տվյալ աշխարհի տարածքում իրագործում էր այնքանով, որքանով պահանջում էր պետական շահը՝ ի դեմս արքունի քաղաքականության, որի արտահայտիչներն ու ղեկավարողներն էին մեծամեծքը:

Լինելով նախարարական դասակարգի ներկայացուցիչներ նախարարներին բնորոշ քոյր հատկանիշներով հանդերձ, մեծամեծքը միաժամանակ տարբերվում էին մյուս նախարարներից պետական կառավարման գործում իրենց ունեցած իրավունքներով:

Ամփոփելով մեր միտքը, նկատենք, որ

1. մեծամեծքը որպես ինստիտուտ բնորոշ է թագավորական պետությանը, և այն արքունի պալատում ամենագործույցա, ամենանկուն մարմինն էր երկրի ռազմաքաղաքական, կրոնագաղափարական և մշակութային կյանքում իր ունեցած վճռորոշ դերով,

2. մեծամեծքի, որպես սոցիալական խմբի, գոյությունը Հայաստանում վերաբերում է Արշակունյաց ժամանակաշրջանին, իսկ որպես վերապրուկ նաև նրանց վերացումից որոշ ժամանակ անց,

3. մեծամեծքի սոցիալական կազմն իր ձևավորման ընթացքում բաղկացած լինելով պաշտոնյա-պարզակական բողատերերից, այնուհետև փոխվեց հայրենիքատեր-պաշտոնյաների, որոնք բյուրավորներ կամ հազարավորներ էին,

4. մեծամեծքի գլխավոր առանձնահատկությունը, որով նրանք տարբերվում էին մյուս նախարարներից, նրանց՝ աշխարհների (նահանգների) իրավական ներկայացուցիչներ լինելն էր արքունի խորհրդարանում,

5. 5-րդ դարի պատմիչներին ծանոթ է «Աշխարհացոյցյան» աշխարհների էությունը և աշխարհ-գավառ հարաբերակցությունը:

Р. В. АРУТЮНЯН—«Мецамецы» — понятие административно-политического деления царства Великой Армении.—Непосредственное влияние административно-политической истории Древней Армении очевидно на формирование социальных слов. Поэтому изучение такого социального понятия, как «мецамецы» дает нам возможность проанализировать вопрос об историческом времени появления «ашхаров» (областей) в Великой Армении по «Ашхарацуйицу».

Анализ понятия «мецамецы», который выявляет многосторонние функции этого института, его роль в решениях всех важнейших вопросов в стране, его место на феодальной лестнице, а также время его нахождения на исторической сцене Армении, показывает, что:

— мецамецы, как институт, определен царской властью и является самым дееспособным, самым гибким органом в сфере военно-политической, религиозной и культурной жизни;

— существование мецамецов в Армении, как социальной группы, касается периода Аршакидов, хотя после них продолжалось еще некоторое время;

— мецамецы были нахарарами-чиновниками, которые имели больше тысячи солдат;

— главное, чем отличались мецамецы других нахараров. это то, что они де-юре были представителями ашхаров Великой Армении на царском совете.

Вышукказанные выводы и известия историков об ашхарах дают основание заявить, что описание «ашхаров» в «Ашхарацуйице» не чуждо армянской реальности V века.